



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 7

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2018 Թ. ՄԱՐՏԻ 21-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. ԵՊՀ-ի 100-ամյակի կապակցությամբ ամբիոններից ներկայացված պետական, կառավարական և համալսարանական պարգևների առաջադրվող թեկնածությունների քննարկում:
2. Երկրորդ լուծարքային շրջանի արդյունքների քննարկում:
3. Քննական տեղեկագրերի և գրավոր աշխատանքների գրառումների վիճակի մասին:
4. Քննական գնահատականների իրազեկման մասին:
5. Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի հաշվետվությունը:
6. Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 25 անդամներից նիստին մասնակցում է 19-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով (ԵՊՀ-ի 100-ամյակի կապակցությամբ ամբիոններից ներկայացված պետական, կառավարական և համալսարանական պարգևների առաջադրվող թեկնածությունների քննարկում) պրոֆ. Ա. Ավագյանը ձայն տվեց բոլոր ամբիոնների վարիչներին, որոնք մանրամասն ներկայացրին և փաստարկեցին պետական, կառավարական և համալսարանական գանազան պարգևների առաջադրվող թեկնածուների գիտամանկավարժական արժանիքները: Գիտական խորհրդի անդամները հիմնականում դրական ու անաչառ գնահատեցին թեկնածուների՝ ակնկալվող ամենատարբեր պարգևաբաշխումներին ներկայացնելը և խնդրեցին դեկանին առաջադրվող ցուցակը ուղարկել ռեկտորատ:

Օրակարգի **2-րդ հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանին: Վերջինս ամփոփ ներկայացրեց երկրորդ լուծարքային շրջանի արդյունքները: Նա մասնավորապես նկատեց, որ, ցավոք, պատկերն այնքան էլ գոհացուցիչ չէ. երկրորդ լուծարքային շրջանից հետո պարզվել է, որ հայ բանասիրության ֆակուլտետի ուսումնառության գործընթացից դուրս են մնացել 12 ուսանողներ, ընդ որում՝ 10-ը առկա 4-րդ կուրսից, և 2-ը՝ հեռակա ուսուցումից:

Հարցի առիթով ձայն խնդրեց պրոֆ. Ժ. Քալանթարյանը: Նա խոսեց ուսանողության մեջ կրթության նկատմամբ վերջերս ձևավորված արատավոր երևույթների՝ անտարբերության ու ծուլության մասին՝ հավելելով, որ որոշ ուսանողների թվում է, որ եթե վճարել են սովորելու համար, ապա վճարել են նաև գնահատականների համար: Ոմանք գալիս և պարզապես դրական գնահատական են աղերսում, յուրաքանչյուրը 3 տոմս է փոխում լուծարքի ժամանակ:

Հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ բակալավրիատում 1-ին լուծարքի ժամանակ 50 ուսանողներ արդեն պարտքեր ունեին, վիճակը բավարար է, սակայն, մագիստրատուրայում: Նա կիսեց պրոֆ. Ժ. Քալանթարյանի մտահոգությունը՝ ասելով, որ որոշ ծնողներ երբեմն գալիս են դեկանատ և պարզապես զարմանում իրենց զավակների անբանությունից ու ստախոսությունից: Դեկանը պահանջեց քննությունների ընթացքում արգելել ուսանողի՝ տոմս փոխելու խնդրանքը բավարարելը, չտրվել նրա անձնական «տխուր պատմություններին», պատճառաբանություններին ու տրտունջներին, որոնք հիմ-

նականում անհիմն են և հնարովի... Չէ՞ որ չտվորողն իր կամքից անկախ վարակում է լավ սովորողին ու շնորհալուն:

Օրակարգի **3-րդ հարցը** նվիրված էր քննական տեղեկագրերի և գրավոր աշխատանքների գրառումների վիճակին: Պրոֆ. Ա. Ավագյանը հատուկ շեշտադրեց, որ, չգիտես ինչու, մի տեսակ օրինաչափություն են դարձել քննական տեղեկագրերի և գրավոր աշխատանքների գրառումների ժամանակ վրիպակի ուղղումն ու անփութությանը. մի՞ թե հնարավոր չէ անվրեպ գրառումը, և ինչո՞ւ են հատկապես շարունակաբար սխալվում նույն դասախոսները: Ի դեպ, ռեկտորատը խիստ մտահոգված է, որ քննական տեղեկագրերի և գրավոր աշխատանքների գրառումների վիճակը տխուր է հատկապես հայ բանասիրության ֆակուլտետում, և արդեն զգուշացրել է մեզ: Դեկանը տեղեկացրեց բոլոր ամբիոնների վարիչներին, որ այսուհետ քննական տեղեկագրերում և գրավոր աշխատանքների գրառումներում ուղղում կատարող դասախոսները կգրկվեն հավելավճարներից, այդ թվում՝ 13-րդ աշխատավարձից:

Գիտխորհրդի նախագահը, անցնելով օրակարգի **4-րդ հարցին**, ասաց, որ կարգապահական տեսակետից այն աղերսվում է նախորդին, այն է՝ քննող դասախոսը պարտավոր է ուսանողին բարձրաձայն իրազեկել նշանակվող գնահատականի մասին և նրա ներկայությամբ տվյալ միավորն անցկացնել թե՛ տեղեկագրում և թե՛ ուսանողական գրքույկում: Երբեմն անփութության պատճառով իրար չեն համապատասխանում տեղեկագրի և ուսանողական գրքույկի գնահատականները, ու սկսվում է բացատրագիր-զեկուցագրերի շարանը:

Գիտխորհրդի նախագահ Ա. Ավագյանը, անցնելով **օրակարգի 5-րդ** հարցին, ընդհանուր լեզվաբանության ամբիոնի տարեկան հաշվետվության համար ձայնը տվեց ամբիոնի վարիչ դոց. Վ. Պետրոսյանին: Վերջինս մասնավորապես զեկուցեց հետևյալը.

- Հաշվետու՝ 2017-2018 ուստարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը դասավանդումը զուգակցել է ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքի հետ: Ամբիոնի գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել լեզվաբանության տեսության, կառուցվածքային լեզվաբանության, համակարգչային լեզվաբանության, լեզվաբանական նշանագիտության, հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության,

հ.-ե. լեզուների համեմատական քերականության, դասական լեզուների դասավանդման հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր:

2017 թ. փետրվարի 28-ին ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ իր հիմնադիր վարիչ, ակադ. Գ. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, որին զեկուցումներով մասնակցեցին ինչպես ԵՊՀ, այնպես էլ հանրապետության այլ գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ: Հաջողված զեկուցումները տպագրվեցին «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի երկու՝ «Բանասիրություն» և «Հայագիտություն» պրակներում:

Հաշվետու շրջանում ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասախոսները՝

1) գիտական տարբեր հանդեսներում և գիտաժողովների զեկուցումների ժողովածուներում հրատարակել են **15** (տասնհինգ) հոդված (Վ. Պետրոսյան՝ 8, Լ. Հովսեփյան՝ 1, Ա. Աբրահամյան՝ 2, Ս. Ավետյան՝ 2, Ա. Հայրապետյան՝ 2), որից մեկը՝ միջազգային գրախոսվող հանդեսում (**В. З. Петросян, Происхождение в древнеармянском языке сонорного звука /y/ и его фонематическая значимость (исторический аспект)/ European journal of Humanities and Sosial Sciennes, 2017, ном. 5, с. 24-29**),

2) մասնակցել են միջազգային և հանրապետական գիտաժողովների՝ ներկայացնելով **6** (վեց) զեկուցում (Վ. Պետրոսյան՝ 1, Լ. Հովսեփյան՝ 2, Ա. Աբրահամյան՝ 2, Ս. Ավետյան՝ 1)։

Ամբիոնն ունի 2 հեռակա ասպիրանտ և 1 հայցորդ:

Ամբիոնի դասախոսները տարբեր դասընթացներ են վարել (լեզվաբանության հիմունքներ, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական քերականություն, հ.-ե. լեզուների համեմատական քերականություն, լատիներեն, հին հունարեն, լեզվաբանական տիպաբանություն, իմաստաբանական արդի ուսմունքներ և այլն) ԵՊՀ 5 ֆակուլտետների (հայ բանասիրության, ո/գ բանասիրության, արևելագիտության, աստվածաբանության, կենսաբանության) և 1 կենտրոնի (Ֆարմացիայի ինստիտուտ) բակալավրիատում և մագիստրատուրայում: Ըստ ուսանողական սոցիալական տվյալների՝ ընդհ. լեզվաբ. ամբիոնի դասախոսական կազմի միջին գնահատականը 4 միավորից բարձր է: Ինչպես երևում է տպագրված աշխատանքների ցանկից, ամբիոնի դասախոսների մի մասը, մանկավարժական աշխատանքին զուգահեռ, արդյունավետ կերպով զբաղվում է նաև գիտությամբ:

Հաշվետու տարին նախորդներից առանձնանում է հատկապես այն առումով, որ ԵՊՀ-ում կրթական նոր չափորոշիչների կիրառման պատճառով էականորեն նվազեց ամբիոնի ժամաքանակը (ավելի քան 2,5 հաստիքի չափով), որը չէր կարող իր բացասական հետևանքները չունենալ: Հետևանքը եղավ այն, որ պակասեցին ոչ միայն դասախոսների հաստիքները, այլև կրճատվեցին դասախոսներ (նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ամբիոնի հիմնական և ոչ հիմնական դասախոսների թիվը կրճատվեց ևս 3-ով):

Չնայած փոքրաթիվ կազմին՝ այսօր էլ ընդի. լեզվաբ. ամբիոնը շարունակում է ապրել լիարժեք գիտական կյանքով:

Շնորհակալություն:

Գիտխորհուրդը ընդհանուր լեզվաբանության ամբիոնի տարեկան աշխատանքը մի-աձայն գնահատեց դրական:

Ընթացիկ հարցերում՝

Լ Ս Ե Ց Ի Ն – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Լևոն Օնիկի Ալոյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Ելույթ ունեցողները նկատեցին, որ հայցորդը նախընտրում է արևմտահայ գրականությունը: Այդ իսկ նկատառումով նրան առաջարկվեց պատմության թեմայի հետազոտությունն արևմտահայ ռոմանտիկական արձակում, որի առանցքը հիմնականում կկազմի Ծերենցի պատմավիպասանության համակողմանի ուսումնասիրությունը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հաստատել ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Լևոն Օնիկի Ալոյանի** թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակում»՝ Ժ 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ալբերտ Արշավիրի Մակարյանին**:

ԼՍԵՑԻՆ.- Հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության ամբիոնների՝ 2017 թ. նոյեմբերի 30-ին կազմակերպած՝ «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական երկրորդ գիտա-ժողովի հողվածների ժողովածուի տպագրման հարցը /խմբագրական խորհուրդ՝ Ա. Աբաջյան, Ա. Ավագյան, Յու. Ավետիսյան, Լ. Խաչատրյան, Լ. Հովհաննիսյան, Լ. Հովսեփյան, Ռ. Սաքապետոյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ա. Մակարյանը, Բ. Գ. Թ., դոց. Ն. Դիլբարյանը և այլք: Նշվեց, որ ժողովածուն գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, համապատասխանում է գիտական հողվածների համար սահմանված չափանիշներին, ինչպես նաև ընդգրկվել է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդունված հրատարակությունների ցանկում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով հողվածների ժողովածուի գիտական որոշակի արժեքն ու կարևորությունը՝ հաստատել ամբիոնի որոշումը և երաշխավորել այն տպագրության:

ԼՍԵՑԻՆ.- Հայոց լեզվի պատմության ամբիոնի հայցորդ **Տաթևիկ Մանուկյանի** թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Բ. Գ. Թ., դոց. Ն. Դիլբարյանը և այլք: Ատենախոսության թեմա առաջադրվեց «Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների լեզուն», գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոց. Ն. Դիլբարյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ամբիոնի որոշումը և ատենախոսության թեմա հաստատել «Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների լեզուն», գիտական ղեկավար նշանակել Բ. Գ. Թ., դոց. Ն. Դիլբարյանին:

ԼՍԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի հայցորդ Թամարա Վաչիկի Հարությունյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Լ. Թեյսյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Թամարա Հարությունյանը 2002 թվականին ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրան, 2017 թ. հոկտեմբերին ձևակերպվել է հայցորդ հայոց լեզվի ամբիոնում (Ժ.02.01 <<Հայոց լեզու>> մասնագիտությամբ):

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հայոց լեզվի ամբիոնի հայցորդ Թամարա Հարությունյանի ատենախոսության թեմա հաստատել <<Ուղղագրական հիմնախնդիրների արտացոլումը ժամանակակից հայերենի ուղղագրական բառարաններում>> (Ժ.02.01 <<Հայոց լեզու>>):

2. Թամարա Հարությունյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել ք. գ. դ., դոց. Փառանձեմ Մեյթիխանյանին:

ԼՍԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (հեռակա ուսուցում) Հռիփսիմե Սուրենի Սարգսյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Լ. Թելյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Հռիփսիմե Սարգսյանը 2017 թվականին ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրան, հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա (հեռակա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտությամբ (Ժ.02.01):

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Հռիփսիմե Սարգսյանի ատենախոսության թեմա հաստատել <<Գովազդային խոսույթը արդի հայերենում>> (Ժ.02.01 <<Հայոց լեզու>>):

2. Հռիփսիմե Սարգսյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել ք. գ. դ., պրոֆ. Յուրի Ավետիսյանին:

ԼՍԵՑԻՆ – Բ. գ. թ., դոցենտ Զարիկ Աղաջանյանի «Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում» աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Լ. Թելյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ գիրքը վերաբերում է արդիական և կարևոր մի խնդրի, որը լուրջ և համակողմանի քննության կարիք ունի: Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել ու ներկայացրել է քննվող լեզվական իրողության վերաբերյալ գրականությունը, համադրել եղած կարծիքները: Գրքում առանձին բաժիններով ներկայացված են շեշտադրության նորմավորմանն առնչվող խնդիրները, իսկ վերջում առաջարկվում են շեշտադրության կանոնարկման սկզբունքներ և չափանիշներ: Այս աշխատանքը կհեշտացնի շեշտադրությանն առնչվող հարցերի ուսումնասիրությամբ հետագա զբաղվողների գործը:

Սույն աշխատանքի խմբագիրն է Բ. Գ. Թ., դոցենտ Մանուկ Ֆելեքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ դոցենտ Զարիկ Աղաջանյանի «Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում» աշխատանքը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ – Հայցորդ Էդիտա Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Էդիտա Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատվել է Ժ.02.02 (ընդհանուր և համեմատական լեզվաբանություն) մասնագիտությամբ՝ «Միջին հայերենի բառապաշարի գործառական շերտերը (ըստ միջին հայերենի բառարանների)» թեմայով: Նկատի ունենալով մի կողմից՝ այն, որ վերջին տարիներին քննարկման նյութ է դարձել միջին հայերենի՝ որպես հայերենի զարգացման փուլերից մեկի առանձնացման գիտական հիմքերի հարցը, իսկ մյուս կողմից՝ այն, որ հաստատված թեման ընդհանուր լեզվաբանական չէ, ամբիոնը ճիշտ է համարում հայցորդ Էդիտա Էդիկի Ասատրյանի համար առաջարկել թեկնածուական ատենախոսության նոր թեմա՝ «Գ. Ղափանցյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները»:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ամբիոնի որոշումը:

Գիտական խորհրդի նիստի վերջում նախագահ Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկայներին և նիստը համարեց փակված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ